



Եզրպոսն անտիկ աշխարհի առակախոս է: Նրա շնորհիվ համաշխարհային գրականության մեջ զարգացել է առակագրությունը՝ իբրև առանձին ժանր: Եզրպոսի մասին տեղեկությունները պատմական չեն: Ամենահին հիշատակությունը Ք.ա. V դարի պատմիչ Հերոդոտոսինն է, որից ենթադրվում է, որ Եզրպոսն ապրել է Ք.ա. VI դ. Սամոսում: Մեզ հասած եզրպոսյան առակների հիմնական ժողովածուն (500 -ից ավելի առակ) կազմվել է I-II դարերում:



# Երկու շուն

**Մ**ի մարդ երկու շուն ուներ: Մեկին սովորեցրել էր որս անել, մյուսին՝ տունը պահել: Ամեն անգամ, երբ որսաշունը դաշտից որս էր բերում, մի պատառ էլ տան պահապան շանն էր նետում: Որսաշունը բարկանում և պարսավում է մյուսին, որ ինքը որսի ժամանակ կաշվից դուրս է գալիս, իսկ նա ոչինչ չի անում և ուրիշի հաշվին գիրանում է: Տան պահապան շունը պատասխանում է.

- Ոչ թե ինձ պարսավիր, այլ տանտիրոջը, չէ՞ որ նա է ինձ սովորեցրել չաշխատել, այլ ապրել ուրիշի աշխատանքով:

Առական այն մասին է, որ օգուտ չկա անբան որդիներին հայիոյելուց, երբ նրանց այդպես են սովորեցրել իրենց ծնողները:




# Եղջերուն ու խաղողը

**Ե**ղջերուն, որսորդներից փախչելով, թաքնվեց խաղողի այգում: Որսորդներն անցան նրա կողքով, բայց չնկատեցին, և եղջերուն մտածեց, որ այլևս չեն նկատի իրեն, ու սկսեց ուտել խաղողի տերևները: Բայց որսորդներից մեկը շուտ եկավ ու նկատեց նրան, իր մոտ մնացած տեգով նշան բռնեց և վիրավորեց եղջերվին: Զգալով մոտալուտ մահը՝ եղջերուն հառաչելով ինքն իրեն ասաց.

- Տեղն է ինձ, խաղողի վազն ինձ փրկեց, իսկ ես ոչնչացրի այն:

Առական այն մասին է, որ երբ մարդը, նեղացնում է իր բարերարներին, Աստված պատժում է նրան:





## Մարդասպանը

**Մ**ի մարդ սպանություն գործեց, և սպանվածի հարազատներն ընկան նրա հետևից: Նա փախավ դեպի Նեղոս գետը, բայց այնտեղ հանդիպեց գայլին: Սարսափած բարձրացավ գետաբերանին կախված ծառի վրա և թաքնվեց, բայց տեսավ ծառից ճոճվող օձին: Նետվեց ջուրը, բայց այստեղ էլ կոկորդիլոսը դարանեց ու խժռեց նրան:

Առական այն մասին է, որ հանցագործությամբ արատավորված մարդուն չեն պատսպարում ո՛չ հողը, ո՛չ օդը և ո՛չ էլ ջուրը:

## Կույրը

**Մ**ի կույր մարդ կարողանում էր շոշափելով ճանաչել իր ձեռքը տվեցին գայլի ձագին: Նա շոշափեց և մտածկոտ ասաց.

- Չգիտեմ՝ ինչի ձագ է, գայլի՞, աղվեսի՞, թե դրանց նման մի այլ կենդանու, բայց մի բան գիտեմ՝ ոչխարի հոտի մեջ չթողնեք նրան:

Առական այն մասին է, որ վատ մարդկանց բնույթը հաճախ երևում է նաև արտաքինից:




# Աստղագուշակը

**Մ**ի աստղագուշակ սովորություն էր դարձրել ամեն երեկո տնից դուրս գալ և աստղերին նայել: Եվ ահա մի անգամ, հանգիստ զբոսնելով քաղաքի ծայրամասում, մտքերով ընկնելով ու հայացքը դեպի երկինք հառելով՝ ընկավ ջրհորը:

Լացուկո՞ծ դրեց: Մի մարդ, լսելով նրա աղմկոտ լացուկո՞ծը, գլխի ընկավ, թե ինչ է կատարվել:

- Ա՛յ հորդ ողորմի, դու ուզում ես տեսնել, թե ինչ է կատարվում երկնքում, այնինչ գետնի վրա եղածը չես տեսնում:

Առական այն մարդկանց մասին է, որոնք պարծենում են հրաշքներով, բայց ի վիճակի չեն կատարելու նույնիսկ այն, ինչ անում է յուրաքանչյուրը:



## Եզներն ու սոնին

**Ե**զները քաշում էին սայլը, իսկ սոնին ճռռում ու ճռռում էր: Նրանք շուռ եկան ու ասացին.

- Ա՛յ սոնի, ամբողջ ծանրությունը մենք ենք տանում, իսկ տնքացողը դ՛հու ես:

Առական այն մասին է, որ գոյություն ունեն նման մարդիկ, որոնք ցույց են տալիս, թե տանջվում են, սակայն իրենց փոխարեն ուրիշներն են աշխատում:

## Աղվեսն ու խաղողը


**Ք**աղցած աղվեսը տեսավ խաղողի վազը՝ կախ ընկած ողկույզներով, ուզեց դունչը հասցնել խաղողին, բայց չկարողացավ: Եվ հեռանալով՝ ինքն իրեն ասաց. «Դեռ խակ է»: Առակն այն մասին է, որ որոշ մարդիկ, երբ հաջողության չեն հասնում, քանի որ ուժ ու կարողություն չունեն, մեղքը գցում են պայմանների վրա:



## Կրիան ու արծիվը

**Կ**րիան արծիվին երկնքում տեսավ և ինքն էլ ցանկացավ թռչել: Նա արծիվին խնդրեց՝ ինչ գնով էլ լինի, իրեն էլ թռչել սովորեցնի: Արծիվն ասաց, որ դա անհնար բան է, բայց կրիան համառեց ու թախանձեց: Արծիվը ստիպված նրան բարձրացրեց երկինք և այնտեղից բաց թողեց մի ժայռի վրա: Կրիան ջախջախվեց, կտոր-կտոր եղավ ու շունչը փչեց:

Առակն այն մասին է, որ մրցակցելու ծարավով տարված շատ մարդիկ չեն լսում խելացի խորհուրդը և իրենք իրենց կործանում են:



# Աղվեսն ու կոկորդիլոսը

**Ա**ղվեսն ու կոկորդիլոսը վիճեցին, թե իրենցից ով է ավելի նշանավոր: Կոկորդիլոսը շատ գովեց իր նախնիների փառքը, շատ բաներ ասաց և վերջապես հայտարարեց, որ իր նախահայրերը եղել են գիմնագիստներ:

Աղվեսը պատասխանեց.

- Հա՛, էլ մի՛ ասա, կաշվիցդ էլ երևում է, թե ինչքան ես չարչարվել գիմնագիայում:

Առական այն մասին է, որ իրականությունը միշտ էլ մերկացնում է ստախոսներին:



# Գյուղացին ու իր որդիները

**Գ**յուղացու մահը մոտեցել էր: Նա ուզում էր, որ իրենից հետո որդիները լավ հողագործ դառնան: Նրանց հավաքեց ու ասաց.

- Սիրելի զավակներս, ես մի խաղողի վազի տակ գանձ եմ թաղել:

Հենց որ նա մահացավ, որդիները շտապ վերցրին բահերն ու թիերը և ամբողջ հողամասը փորեցին: Ճիշտ է, նրանք գանձ չգտան, բայց այգին առատ բերք տվեց:

Առական այն մասին է, որ աշխատանքը գանձ է մարդկանց համար:

## Պոչատ աղվեսը

**Ա**ղվեսի պոչը մնաց թակարդում, և նա մտահոգվեց, թե դրանից հետո ոնց պետք է այդպես խայտառակված ապրի աշխարհում: Եվ որոշեց մյուս աղվեսներին էլ համոզել, որ ձեռք քաշեն իրենց պոչերից: Նա բոլոր աղվեսներին հավաքեց և սկսեց նրանց գլխին քարոզ կարդալ, որ կտրեն իրենց պոչերը, նախ՝ որովհետև գեղեցիկ չեն, և երկրորդ՝ ավելորդ բեռ են: Բայց մի աղվես նրան պատասխանեց.

- Է՛, բարեկամս, դու մեզ այդ խորհուրդը չէիր տա, եթե դրանից օգուտ չունենայիր:

Առական այն մասին է, որ կան մարդիկ, որոնք իրենց մերձավորներին խորհուրդ են տալիս ոչ թե մաքուր սրտով, այլ սեփական օգուտի համար:

## Տոզած աղվեսը

**Ք**աղցած աղվեսը ծառի փչակում հովիվների թողած հացն ու միսը գտավ: Ներս սողաց և այդ բոլորը կերավ: Աղվեսն այնքան տոզեց, որ այլևս չկարողացավ դուրս գալ. մի գլուխ ախ ու վախ էր անում ու տնքում: Մեկ էլ մի ուրիշ աղվես նրա տնքոցը լսելով՝ մոտեցավ ու հարցրեց, թե ինչ է եղել: Իմանալով պատահածը, ասաց.

- Հիմա դու մի ճար ունես. դարձիր նույնը, ինչ ներս մտնելուց առաջ էիր, և դուրս կգաս:

Առական այն մասին է, որ դժվարին պայմանները ժամանակի ընթացքում ինքնին հեշտանում են:



# Աղվեսն ու դիմակը

**Ա**ղվեսն ընկավ արձանագործի արվեստանոցն ու ամեն ինչ տակնուվրա արեց: Այդտեղ նկատեց ողբերգակի դիմակը: Աղվեսը բարձրացրեց այն ու ասաց.

- Ինչ գլուխ է, բայց ուղեղ չունի:

Առակը վերաբերում է այն մարդուն, որ փառահեղ մարմին ունի, բայց հոգին դատարկ է:



# Ժլատը

**Մ**ի ժլատ մարդ իր ամբողջ ունեցվածքը փողի վերածեց. ձուլածո ոսկի առավ, թաղեց պատի տակ: Ամեն օր գալիս նայում էր ու գնում իր գործին: Մոտակայքում աշխատող մարդկանցից մեկը տեսավ, որ սա ամեն օր գալիս-գնում է, գլխի ընկավ, թե ինչն ինչոց է և ոսկին գողացավ: Երբ ժլատը եկավ, տեսավ դատարկ տեղը, վայ-վույ դրեց ու սկսեց մազերը փետել: Մի մարդ տեսավ նրա հուսահատությունը, եղելությունն իմացավ ու ասաց.

- Իզուր ես տխրում, ոսկու տեղը մի քար դիր և պատկերացրու, որ ոսկի է, մեկ է, դու նրանից չէիր օգտվում:

Առակն այն մասին է, որ եթե ունեցվածքը չի օգտագործվում, բանի պետք չէ:



# Առյուծն ու մուկը

**Ք**նած առյուծի մարմնի վրայով մի մուկ վազեց: Առյուծը զարթնեց, բռնեց նրան և քիչ էր մնում կուլ տար, բայց մուկը խնդրեց բաց թողնել իրեն՝ հավատացնելով, որ բարությանը կհատուցի իր փրկության համար: Առյուծը քահքահ ծիծաղեց ու բաց թողեց նրան:

Շատ ժամանակ չանցած՝ այնպես պատահեց, որ առյուծն ընկավ որսորդների ծուղակը, և նրան պարանով կապկպեցին ծառին: Մուկը, լսելով առյուծի հառաչանքները, իսկույններթ վազեց, կրծեց պարանը և ազատեց նրան՝ ասելով.

- Այն ժամանակ դու ծիծաղեցիր ինձ վրա և կարծես թե չհավատացիր ինձ, իսկ հիմա իմացիր, որ մուկն էլ կարող է երախտահատույց լինել լավության համար:

Առական այն մասին է, որ արածդ մի փոքր բարությունը քեզ կվերադառնա:

